2021-2022 ուստարվա

Հաշվետվություն

2 կիսամյակ

III-Բ դասարան

III բ դասարանում I կիսամյակի սկզբին սովորել են 30 աշակերտ՝ 13 աղջիկ և 17 տղա, տարվա վերջում աշակերտների թիվը դարձել է 32, 17 տղա և 15 աղջիկ:

Դասարանում աշակերտների առաջադիմությունը 100% է, որակականը՝ 65 % : Գերազանց առաջադիմություն ունեն 10 աշակերտ, որոնցից 3 տղա, 7 աղջիկ: Հարվածային են 10 աշակերտ, իսկ միջակ՝ 13 -ը:

Դասարանն ունի մեծ պոտենցյալ, ինչը ուսուցիչ – աշակերտ համատեղ ու քրտնաջան աշխատանքի արդյունք է: Ուսուցիչների և ծնողների համատեղ աշխատանքի շնորհիվ հնարավորություն ընձեռնվեց իրականացնել և՛ ուսումնական, և՛ դաստիարակչական այն բոլոր խնդիրները, որոնք նախատեսվել էին տարվա սկզբին:

Կազմակերպվել են ծնողական ժողովներ: Յուրաքանչյուր ամսվա վերջում կազմակերպվել են հանդիպումներ ծնողների հետ և քննարկվել են ներքին կարգապահական, ինչպես նաև դաստիարակությանն ու ուսումնական գործընթացին վերաբերող հարցեր:

Իրականացվել են համակարգչային դասեր:

Կազմակերպվել է բաց-դաս `<<Գիտաբանիայի դպրոցում>> թեմայով: Դասղեկի ժամին իրականացվել են դաստիարակչական բնույթի տարբեր թեմատիկայով զրույցներ, որոնք նպաստել են դասարանում ընկերասիրության, հանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը:

Տեղի են ունեցել նաև փոխադարձ դասալսումներ ուսուցիչների և փոխտնօրենների կողմից:

Կիսամյակի ավարտին կազմակերպվել է էքսկուրսիա՝ Գառնի, Գեղարդ:

Դասվար՝ Ա. Ծատուրյան